DOI: https://doi.org/ 10.59630/25792644-2025.1.28-93

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ
ՀՊՏՀ «Կառավարչական հաշվառման և աուդիտ» ամբիոնի պրոֆ., տ.գ.դ.
ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԵՊՀ «Կառավարման և գործարարության» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Բանալի բառեր - մասնագիտական կրթության ֆինանսավորում, կատարողականի արդյունքային ցուցիչներ, ֆինանսավորման բազմազանություն, ֆինանսական մենեջմենթ, համալսարանների կայուն զարգացում

Ներածություն

Համալսարանական կրթական ծառայությունների մատուցումը կայուն զարգացման գործընթաց է և պահանջում է ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ ֆինանսավորում: Ընդ որում, բուհական գործընթացն ընդգրկուն է՝ կրթական ծրագրերի իրագործման հետ միասին ներառելով գիտահետազոտական աշխատանքների կատարումն ու հանրային շահերի սպասարկմանն ուղղված ծառայությունների մատուցումը: Սա թույլ է տալիս ենթադրել, որ բուհի ֆինանսավորումը միայն մեկ աղբյուրով չի կարող սահմանափակվել, պետք է լինի բազմազանեցված, իսկ համալսարական կրթության ֆինանսավորման աղբյուրներին վերաբերող հիմնահարցերի քննարկումը, մշտապես, թե՛ հետազոտական աղբյուրներում, թե՛ գործնականում արդիական թեմա է[1]:

[1] Белякова С.А. (ред), Модели финансирования вузов: анализ и оценка, Институт экономики переходного периода, Москва, 2005, с. 79-102.

Այսպես, Գերմանիայի դաշնությունում գործող համալսարանական կրթական համակարգը գրեթե ամբողջովին ֆինանսավորվում է պետության կողմից, Հայաստանի Հանրապետությունում մատուցվող մասնագիտական կրթական ծառայություններում գերակշիռ մաս են կազմում մասնավոր կրթավճարները, որոնք իրականացվում են ուսանողների ընտանեկան բյուջեից, իսկ ԱՄՆ-ում համալսարանական կրթության ֆինանսավորման հիմնական մասն իրականացվում է ուսանողական վարկերի հաշվին:

Հարցումները ցույց են տալիս, որ ՀՀ բուհական համակարգում ընդգրկված ուսանողների և գիտաշխատողների համար ցանկալի կլիներ հարյուր տոկոսով օգտվել պետության կողմից կատարվող՝ կրթության հանրային ֆինանսավորման աղբյուրներից, ինչպես Խորհրդային Միությունում էր: Սակայն, նույնիսկ անհրաժեշտ բյուջետային միջոցներ ունենալու դեպքում, մակրոտնտեսական առումով, որոշակիորեն սահմանափակումներ են գործում համալսարանական գործունեության ապահովման ոլորտում ամբողջական պետական ֆինանսավորման համար:

Այս առումով կարևորվում է ՀՀ-ում համալսարանական կրթության ֆինանսավորման նոր մոտեցումների առաջադրումն այնպես, որպեսզի այն համահունչ լինի կրթական ծառայություններին առնչվող թե՛ ներքին, և թե՛ արտաքին շահառուներին:

Գրականության ակնարկ (300)

Մի շարք հրապարակված աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքում պետության կողմից մեկ ուսանողին ընկնող բարձրագույն կրթության տարեկան ծախսերի ֆինանսավորման չափը կարող է տարբերվել մինչև կրկնակի անգամ: (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2 Մեկ ուսանողին ընկնող բարձրագույն կրթության տարեկան ծախսերի ֆինանսավորումը տարբեր երկրներում (Եվրո)[1]



[1] Գծապատկերը կազմվել է Eurostat-ի, 1. https://ec.europa.eu/eurostat և Eurostudent նախագծի 2. https://www.eurostudent.eu/ կայքերի տվյալների հիման վրա:

Գծապատկեր 3. Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը տարբեր երկրներում (%)[1]



Հատկանշական է արձանագրել նաև այն հանգամանքը, որ մասնագիտական կրթության ֆինանսավորման չափը պայմանավորվում է նաև տարբեր երկրներում մատուցվող կրթական ծա-

[1] Education at a Glance, How much public and private investment in educational institutions is there?, OECD, 2020, pp. 296-306. https://www.oecd-ilibrary.org/docserver/69096873-en.pdf?expires=1648838848&id=id&accname=guest&checksum=69830FDE1BE78AF520409F7AA4D19914.

ռայությունների ինքնարժեքով: Զարգացող երկրներում այդ ծառայությունների ինքնարժեքը համեմատաբար ցածր է, սակայն այս դեպքում էլ, բարձրագույն մասնագիտական ծառայությունների ֆինանսավորման տարբեր մոտեցումներ են ձևավորվում: (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 4. Համալսարանական գործունեության ֆինանսավորման կառուցվածքը ՀՀ-ում (%)[1]



Գնահատելով ՀՀ պետական բուհերի գործունեության ֆինանսական կառուցվածքը՝ նորից արձանագրվում է այն փաստը, որ ու-

[1] **Պողոսյան Ա.,** Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները ՀՀ-ում, «Հյուսիսափայլ» գիտական հանդես, Երևան, 2020, 2 (6), էջ 56:

սանողական կրթավճարներն առաջին տեղում են, երկրորդ տեղում՝ քսաներեք տոկոս տեսակարար կշռով թողնելով պետական ֆինանսավորումանը: (տե՛ս գծապատկեր 4):

Գրականության մեջ առկա է կարծիք, որ ՀՀ բուհերը, բացի ավանդական համարվող՝ մասնավոր կրթավճարների, պետական ֆինանսավորման և ուսանողական վարկերի աղբյուրներից, պետք է այլընտրանքային աղբյուրներ ևս փնտրեն, առաջարկելով ինդառումենթը, գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացումը, դրամաշնորհները, ինչպես նաև գործատուների կողմից խնամակալության ինստիտուտի կիրառումը դիտարկել որպես այդպիսիք, շեշտադրելով միջազգային պրակտիկայում դրանց լայն տարածումը[1]: Ընդ որում, արդեն իսկ ՀՀ կառավարության որոշումներով ամրագրված է, որ բուհերում պետական աջակցությամբ անձեռնամխելի դրամագլուխներ են ձևավորվելու:[2]

Հետազոտության մեթոդաբանություն (200)

Հետաոտությունում կիրառվել են գիտական աբստրակցիայի մոտեցումներ, մասնագիտական կրթության ֆինանսավորումը դիտարկելով կրթական շուկայում գործող առաջարկի և պահանջարկի տեսանկյունից: Բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորումը ամբողջությամբ հանրային միջոցներով իրականացնելիս, սովորող ուսանողների թվաքանակն ավելանում է, սակայն միաժամանակ, աշխատողների նկատմամբ պահանջարկն աշխատաշուկայում նվազում է(տե՛ս գծապատկեր 1.2.1-ի պահանջարկը ցույց տվող գիծը), ինչն էլ ստիպում է կառավարությունն-

[1] **Gevorgyan V.,** Situational evaluation issues of cash flow in universities, Finance and accounting scientific journal, 2020, 2(6), pp. 152-161.

[2] Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին օրենքց բխող գործողություններ, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի #351-Լ որոշում

ին մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար լրացուցիչ միջոցներ չտրամադրել:



Գծապատկեր 5 Պետական ֆինանսավորմամբ թողարկվող մասնագետների հավասարակշռումը կրթության շուկայում[1]

Սակայն, մյուս կողմից, կտրուկ նվազեցնելով հանրային միջոցներով մասնագիտական կրթության ֆինանսավորումը, պետությունը կարող է հասնել նրան, որ, բուհի շրջանավարտների կրճատմամբ՝ աշխատաշուկայում աճի համապատասխան մասնագետների քանակը (տե՛ս գծապատկեր 5-ի O գիծը), և արդյունքում նորից

[1] **Պողոսյան Ա.,** Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները ՀՀ-ում, «Հյուսիսափայլ» գիտական հանդես, Երևան, 2020, 2 (6), էջ 52:

անհրաժեշտություն առաջանա ավելացնելու կրթության պետական ֆինանսավորումը:

Հետևաբար, անգամ անհրաժեշտ և բավարար ռեսուրսներ պարագայում մեթոդաբանական խնդիր է առաջանում հանրային միջոցներով համալսարանական կրթության ամբողջական ֆինանսավորման մեխանիզմի ձևավորման հարցում, քանի որ աշխատուշուկայում մասնագետների առաջարկի և պահանջարկի համարժեքության ապահովման պահանջ է ձևավորվում (տե՛ս գծապատկեր 1-ի Q և F կետերը):

Հետազոտության մեթոդաբանության շրջանակը ընդգրկել է նաև վիճակագրական վերլուծություն, համադրելով ՀՀ և Եվրոպական միության երկրների համալսարանական կրթության ֆինանսավորման ցուցանիշները և դրա հիման վրա կատարելով որակական եզրահանգումներ: Որպես գնահատման գործիքներ են համարվել նաև կատարողականի առանցքային ցուցիչները, որոնք կիրառվել են կրթության ֆինանսավորման մեխանիզմների վերանայման ժամանակ:

Վիզուալացում: Օգտագործվել են տվյալների վիզուալացման տարբեր մեթոդներ տվյալների հավաքածուներում հարաբերություններն ու օրինաչափությունները ուսումնասիրելու և ներկայացնելու համար:

Վերլուծություն

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում բուհերը գործում են դեռևս Խորհրդային Միությունից ժառանգած գործունեության սկզբունքներով՝ կրթական ծառայությունները մատուցելիս հիմնականում շրջանցում են գիտահետազոտական ոլորտը: Կատարվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները՝ կապված չլինելով գործող գիտական շուկայի հետ, մեծամասամբ իրատեսական չեն և հիմնականում ձևական բնույթ են կրում,

ուղղված չեն գիտահետազոտական գործարքների առևտրայնացման զարգացմանը, բուհերին զրկելով լուրջ ֆինանսական ներհոսքերից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունքները հիմնականում չեն վաճառահանվում և մնում են թղթի վրա, որի հիմնական պատճառը կարելի է համարել տնտեսության ոլորտներից խզվածությունը: Համեմատության համար նշենք, որ արևմտյան համալսարանները հետազոտական գործունեության առևտրայնացմանը այժմ հատկապես մեծ ուշադրություն են դարձնում, այն համարելով ֆինանսական պաշարների լրացման միջոց: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցող մի շարք երկրներում ՀՆԱ-ում համալսարանների հետազոտական գործունեության արդյունքների տեսակարար կշիռները գերազանցում են կրթական գործունեության արդյունքներին (տե՛ս գծապատկեր 6):

Գծապատկեր 6 Բարձրագույն կրթության և հետազոտությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2020 թ. (%)[1]



[1] The European higher education area in 2020: Bologna process implementation report, pp. 25-32, https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/default/files/ehea_bologna_2020_chapter01.pdf.

Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային փորձի վերլուծության հիման վրա՝ հնարավոր է համարվում ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրների ձևավորումը ներկայացնել հիմնականում երկու ուղղությամբ՝ հանրային և մասնավոր, այսինքն կիրառել համալսարանական գործունեության ֆինանսավորման դիվերսիֆիկացիա (տե՛ս գծապատկեր 7): Ընդ որում, կախված սոցիալ-տնտեսական զարգացման միտումներից, այդ ֆինանսավորման հանրային և մասնավոր չափաբաժինները պարբերաբար փոփոխություն կարող են կրել:



Գծապատկեր 7 Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրները[1]

[1] **Պողոսյան Ա.,** Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները ՀՀ-ում, «Հյուսիսափայլ» գիտական հանդես, Երևան, 2020, 2 (6), էջ 61:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ արևմտյան բուհերում գիտության արդյունքները հիմնականում շուկայամետ են՝ ունենալով իրենց հասցեատերերը և սպառողները, հակառակ դեպքում, գիտության վերջնարդյունքները և դրանց վրա ծախսվող ռեսուրսներն ուղղակի կփոշիանան: Կոնկրետ ժամանակահատվածում հասցեատեր չունենալու պատճառով, կատարվող գիտահետազոտական վերջնարդյունքները, կարող են հնանալ և պարզապես կորցնել ներդրման գրավչությունը, ինչն էլ ներկայումս տեղի է ունենում ՀՀ բուհական համակարգում[1]:

Արևմտյան բուհերում համալսարանական գործունեության ֆինանսավորման լուրջ գործիք է համարվում նաև ինդուամենթը, որը մի քանի հարյուր տարվա պատմություն ունի: Բարերարների և շրջանավարտների ներդրումներով, բուհերում ստեղծում են նպատակային ֆոնդեր, հանձնվելով հավատարմային կառավարման: Ներդրված միջոցներով ձեռք են բերվում կայուն եկամտաբերությամբ ակտիվներ, որոնցից ստացված տոկոսային եկամուտներն էլ ուղղվում են բուհերի գործունեության ֆինանսավորմանը: Ստացվում է այնպես, որ, համալսարանների նախաձեռնությամբ իրականացնելով ինդուամենթ, ձևավորվում է երկարաժամկետ օգտագործման կապիտալ, որի մայր գումարն անընդհատ աճում է նվիրատվությունների հաշվին, իսկ տոկոսային եկամուտը տրամադրվում է բուհերին: Ընդ որում, իրականացված գիտահետազոտական արդյունքների վաճառահանումից բուհերն իրենք էլ են այդ կապիտալին մասհանումներ կատարում:

Փորձը ցույց է տալիս, որ ինդուամենթի շնորհիվ հսկայածավալ կապիտալ կուտակած արևմտյան բուհերում, գիտակրթական ծրագրերի մոտավորապես մեկ քառորդը ֆինանսավորվել է հենց այդ նպատակային կապիտալից ստացված եկամուտների հաշվին:

---

[1] **Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա.**, Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, Հյուսիսային համալսարան, Երևան, 2016, էջեր 24-50 և 98:

Շատ դեպքերում ձևավորված նպատակային կապիտալի օգտագործման հատույցը շուրջ երեք տոկոս է: Օրինակ, ԱՄՆ-ում գործող թվով 80 համալսարանների կողմից ինդուամենթով ձևավորված նպատակային կապիտալի արժեքը գերազանցում է 1 միլիարդ ԱՄՆ դոլար սահմանագիծը: Հարվարդի համալսարանը այդ ֆոնդից տարեկան ստանում մոտավորապես 950 միլիոն ԱՄՆ դոլար, այն ուղղելով տարբեր գիտակրթական ծրագրերի ֆինանսավորում[1]: Ինդուամենթի պրակտիկան ներկ՝այումս կիրառվում է նաև Ռուսատանի Դաշնությունում, որտեղ այդ գործընթացը ստացել է իր օրենսդրական կարգավորումը և հարկային արտոնությունները, որի արդյունքում շատ բուհեր կարողանում են լրացուցիչ ֆինանսավորում ստանալ[2]:

Ինդուամենթի կիրառումը ֆինանսական լրացուցիչ հնարավորությունների ձեռք բերումից բացի, մի շարք այլընտրանքային առավելություններ ևս կարող են ունենալ, այդ թվում.

- գործարարություն իրականացնող հաջողակ շրջանավարտների հետ կապերի սերտացում և դրանց ֆինանսական հնարավորությունների օգտագործում ի շահ բուհի զարգացման[3],
- երկարաժամկետ գիտակրթական և հետազոտական ծրագրերի ֆինանսավորման կայունության ապահովում, քանի որ ձևավորված կապիտալը երաշխավորում է երկարաժամկետ նպատակային ֆինանսավորման կայունություն,

---

[1] **Гончарова М.А.,** Развитие эндаумент-фондов и их социально-экономический потенциал в контексте модернизации высшего образования в России, https://www.tsutmb.ru/nayk/nauchnyie_meropriyatiya/int_konf/vseross/11_11_2015_professionalno_lichnostnoe_razvitie_prepodavatelya_i_studenta_traditsii_problemy_perspekt/sektsiya_1_sotsialno_ekonomicheskie_i_sotsialno_pedagogicheskie_faktory_modernizatsii_vysshego_obraz/razvitie-endaument-fondov-i-ikh-sotsialno-ekonomicheskiy-potentsial-v-kontekste-modernizatsii-vysshe/.

[2] Федеральный закон № 275-ФЗ «О порядке формирования и использования целевого капитала некоммерческих организаций» (принят 30.12.2006).

[3] История фондов целевого капитала, http://9000innovations.ru/analitika/endaument-mechty-rossiyskih-vuzov.(դիտվել է 15.04.2025թ.)

➢ միջազգային գիտակրթական ծրագրերին մասնակցության ֆինանսական կարողությունների ձեռքբերում,

Պետք է արձանագրել, որ ՀՀ-ում գործող բուհերը ինդուամենթի գործիքակազմը դեռևս չեն կարողանում կիրառել՝ մի շարք պատճառներով.

1. այն դեռևս լիարժեք օրենսդրական կարգավորում չի ստացել մեր երկրում,

2. Հայաստանյան բուհերը հիմնականում օպերատիվ և կարճաժամկետ նպատակադրումների ֆինանսավորման խնդիրներ են լուծում և երկարաժամկետ ուղղվածությամբ անհրաժեշտ՝ ինդուամենթով ձևավորվող կապիտալին տրամադրման ենթակա ֆինանսական ռեսուրսներ չունեն։

Վերլուծությունները նաև ցույց են տալիս, որ ՀՀ բուհերը հիմնականում չեն կարողանում թիրախավորել երկարաժամակետ գործունեության նպատակադրումներին, քանի որ հեռանկարային ծրագրերի ֆինանսավորման ուղղությամբ դժվարությամբ են ռեսուրսներ հայթայթում[1]։

Ներկայումս կարևորվում է նաև կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) կիրառումը համալսարանների պետական ֆինանսավորման գործընթացում։ Բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների համակարգի և դրանց արդյունքով ֆինանսավորման կշիռներ սահմանելու մեխանիզմի մշակումը բխում է պետության ռազմավարական առաջնահերթություններից։ Հետևաբար, համալսարանների տրամադրվող պետական ֆինանսավորման հիմքում դրվելու են այն վերջնարդյունքները, որոնց հետամուտ է լինում երկրի կառավարությունը։ Որպես օրինակ, նման ռազմավարական առաջնահերթություններ կարող են հանդես գալ

[1] **Գևորգյան Վ.,** Բուհի ֆինանսական պաշարների գնահատման բարելավման ուղիները, «Պատմություն և քաղաքագիտություն» գիտական հանդես, Երևան, 2020, 5 (10), էջ 128։

համալսարաններում մշակված գիտահետազոտական արդյունքների առևտրայնացումը, բուհի միջազգայնացման դիրքերի բարելավումը, շրջանավարտների որակը, վարկանիշավորման աղյուսակներում բուհի դիրքերի բարելավումը, կանաչ կրթության կազմակերպումը, համալսարանի ներգրավվածությունը սոցիալական ծրագրերում (տես աղյուսակ 1, սյուն 1)։ Եվ այս դեպքում հաշվի են առնվելու, թե որքանով է համալսարանին հաշվետու ժամանակահատվածում հաջողվել իրականացնելու պետության առաջնահերթություններից բխող նպատակադրումները, որի համար կիրառվում են կատարողականի արդյունքային ցուցանիշներ։ Մյուս կողմից, բուհի առաջընթացի գծով սահմանված առանջնահերթությունները տարբերակված կշիռներ ունե և համարժեք հանդես չեն գալիս տրամադրվող պետական ֆինանսավորման չափաբաժնի հաշվարկներում (տես աղյուսակ 1, սյուն 5)։ Կարևորվում է նաև մեկ ուսանողի հաշվով պետության կողմից բազային ֆինանսավորման սահմանումը, որը նույնպես կարող է տարբերակված ներկայանալ տարբեր բուհերում։ Ընդ որում, տեխնիկական և բնագիտական բուհերի համար այն ավելի բարձր կլինի, քանի որ այնտեղ կրթական ծառայությունների մատուցումը առավել ծախսատար է (լաբորատորիաներ, փորձարարական կենտրոններ և այլն), քան հասարակագիտական բուհերում։

Այսպես, եթե համալսարանում սովորում է 4000 ուսանող, ապա մեկ ուսանողի հաշվով պետությունը տարեկան հատկացնում է 600 մլն տարեկան բազային ֆինանսավորում։ Թերևս այն չի նշանակում, որ 2,4 մլրդ գումարը ամբողջովին հասանելի է լինելու բուհին, քանի որ ֆինասավորելիս պետությունը ելնելով իր ռազմավարական առաջնահերություններից, հաշվի է առնելու համալսարանի գործունեության առաջընթացի արդյունքային ցուցանիշների կատարողականի աստիճանը հաշվետու ժամանակաշրջանում։ Այս դեպքում,

բուհին հատկացվող ֆինանսավորման չափաբաժինը առաջարկում են հաշվարկել կոնկրետ քայլընթացով (տես գծապատկեր 8)։



Գծապատկեր 8 ԿԱՑ-երի արդյունքով պետական ֆինանսավորման առաջարկվող քայլընթացը[1]

Աղյուսակ 1-ում ներկայացվել է համալսարանին հատկացվող պետական տարեկան ֆինանսավորման հաշվարկը ԿԱՑ-երով։ Ընդ որում, տվյալ հաշվարկներում ճշգրտող գործակիցներ են հանդես եկել ինչպես բուհի ֆինանսավո-րումը որոշող արդյունքային ցու-ցիչներ նպատակադրումների հասանելիության գործակիցները, այնպես էլ պետության ռազմավարական առաջնահերթություններ-ից բխող բուհի ֆինանսավորման ուղղությունների կշիռները։ Եթե նպատակադրումների հասանելիություն չի ապահովվել, ապա ԿԱՑ-երը նվազեցրել են ֆինանսավորման ծավալները 1,0-ից փոքր

[1] Կազմել են հեղինակները։

ճշտող գործակիցներով, իսկ եթե փաստացի արդյունքային ձեռքբերումները գերազանցել են նպատակադրումները, ապա ֆինանսավորման շճտող գործակիցները չեն գերազանցել 1,0-ի շեմը:

Աղյուսակ 1 Համալսարանին հատկացվող պետական տարեկան ֆինանսավորման հաշվարկը ԿԱՑ-երով և դրանց ամրագրված կշիռներով

Բուհ-ի ֆինանսավորումը որոշող արդյունքային ցուցիչներ	Նախատեսվող	Փաստացի	Կատարողականի գործակից	Ֆինանսավորման կշիռներ	Փաստացի ֆինանսավորման հաշվարկ
1	2	3	4	5	6
Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացում	75%	50%	0,67	28%	4000 ուսանող x 600 մլն x 0.67 x 0.28 = 450 240
Միջազգայնացման դիրքերի բարելավում	12%	10%	0.83	16%	4000 ուսանող x 600 մլն x 0.83 x 0.16 =
Ըստ մասնագիտության շրջանավարտների աշխատանքի անցնելու արագություն	3 ամիս	5 ամիս	0.60	22%	4000 ուսանող x 600 մլն x 0.6 x 0.22 = 318 720
Միջազգային վարկանիշավորման աղյուսակներում բուհի դիրքերի բարելավում	2 կետով	1 կետով	0.50	18%	4000 ուսանող x 600 մլն x 0.5 x 0.18 = 216 000
Առարկայական ծրագրերում “կանաչ կրթության” մասնաբաժին	9%	11%	1.0	7%	4000 ուսանող x 600 մլն x 1.0 x 0.07 = 168 000
Ուսանողների և դասախոսների կողմից	3 հատ	1 հատ	0.33	9%	4000 ուսանող x 600 մլն x 0.33 x

իրականացված սոցիալական ծրագրերի քանակ					0.09 = 71 280
Ընդամենը				100%	1 224 240

Այսպիսով, եթե բուհի բազային տարեկան ֆինանսավորման ծավալը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կառավարության կողմից նախատեսվել էր 2,4 մլն դրամ (4000 ուսանող x 600 մլն), ապա տարեվերջին, ելնելով կատարողականի արդյունքային ցուցանիշներից այն կրկնակի անգամ կրճատվեց և դարձավ 1 224 240 դրամ:

Եզրակացություններ

Համալսարանական ֆինանսավորման մեխանիզմների բարելավումը ելնում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 81-րդ և 82-րդ կետերով ամրագրված դրույթներից: Արդեն հարցադրումներ են արվում քանակական գնահատումներով ֆինանսավորումից անցում կատարելու արդյունքահենք ֆինանսավորման մեխանիզմների, որոնք կբխեն պետության կողմից ընդունված ռազմավարական առաջնահերթություններից:[1]

Ֆինանսավորելով համալսարաններին, պետությունը պետք է կիրառի այնպիսի մեխանիզմներ, որոնք կխթանեն բուհական համակարգի առաջընթացը և կբարձրացնեն բարձրագույն կրթության մատուցման մրցունակությունը թե արտաքին, և թե ներքին կրթական շուկաներում: Այս առումով, մեր կողմից առաջարկվել է համալսարանների պետական ֆինանսավորման մեխանիզմ, հիմնված կատարողականի առանցքային ցուցիչների վրա: Բուհերի կողմից ստանձնած առանցքային ցուցանիշների փաստացի հասանելիութ-

[1] «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք, 82-րդ կետ, 2022 թ

յան հենքով պետությունը հնարավորություն է ունենում վերանայելու համալսարաններին տրամադրվող ֆինանսավորման չափաբաժինը, որը համալսարաններին շահադրդում է հնարավորինս ապահովել սահմանված նպատակադրումների արդյունքնային կատարողական:

Սակայն, ներկայումս կիրառվող բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարողականի արդյունքային ցուցանիշների համակարգը ամբողջապես ներդրված չէ, ինչը չի նպաստում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման գործող բանաձևը ժամանակավրեպ է, մշակվել է դեռևս Խորհրդային միության ժամանակաշրջանում, որը չի արտացոլում ժամանակակից մոտեցումներ: Բանաձևով բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվում է միայն բազային ֆինանսավորում, որը բավարար չէ որակյալ կրթություն կազմակերպելու համար:[1] Մեր կողմից առաջարկվում է ԿԱՑ-երի արդյունքով պետական ֆինանսավորման մեխանիզմ, որով ճշտվում է պետության կողմից բուհերին հատկացվող ֆինանսական ռեսուրսների չափաբաժինը՝ ելնելով ԿԱՑ-երին փաստացի հասանելիության աստիճանից, ինչպես նաև բուհերի ֆինանսավորումը որոշող արդյունքային ցուցիչների կշիռներից:

Սահմանափակումներ. մեր կողմից առաջարկվող պետական ֆինանսավորման մեխանիզմի սահմանափակումներ կարող են հանդիսնալ բազային ֆինանսավորման բաղադրիչների չափելիության իրատեսությունը, ինչպես նաև բուհերի ֆինանսավորումը որոշող արդյունքային ցուցիչների կշիռներ սահմանումը որոնց

[1] Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին օրենքից բխող գործողություններ, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի #351-Լ որոշում

հիմնավորվածությունը առավել խորքային հետազոտություն է պահանջում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք, 82-րդ կետ, 2022 թ

2. Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին օրենքից բխող գործողություններ, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի #351-Լ որոշում

3. Գևորգյան Վ., Բուհի ֆինանսական պաշարների գնահատման բարելավման ուղիները, «Պատմություն և քաղաքագիտություն» գիտական հանդես, Երևան, 2020, 5 (10), էջ 126-132:

4. Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա., Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, Հյուսիսային համալսարան, Երևան, 2016, էջեր 24-50 և 96-113

5. Պողոսյան Ա., Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները ՀՀ-ում, «Հյուսիսափայլ» գիտական հանդես, Երևան, 2020, 2 (6), էջ 44-58:

6. Белякова С.А. (ред), Модели финансирования вузов: анализ и оценка, Институт экономики переходного периода, Москва, 2005, с. 79-102.

7. Гончарова М.А., Развитие эндаумент-фондов и их социально-экономический потенциал в контексте модернизации высшего образования в России, 2015 с.25-32

8. История фондов целевого капитала, http://9000innovations.ru/analitika/endaument-mechty-rossiyskih-vuzov.

9. Education at a Glance, How much public and private investment in educational institutions is there?, OECD, 2020, pp. 296-306.

10. Gevorgyan V., Situational evaluation issues of cash flow in universities,Finance and accounting scientific journal, 2020, 2(6), pp. 152-161.

11. The European higher education area in 2020: Bologna process implementation report, pp. 25-32

12. https://ec.europa.eu/eurostat

13. https://www.eurostudent.eu/

14. https://www.tsutmb.ru/nayk/nauchnyie_meropriyatiya/int_konf/vseross/11_11_2015

Армен Джгурян, Нонна Хачатрян, Проблемы финансирования университетского образования в Республике Армения - Эффективная финансовая система играет решающую роль в управлении университетским образованием, что является вызовом для вузов, действующих в Республике Армения. Действующая финансовая модель финансирования образовательных услуг вузов утратила свою актуальность и не соответствует требованиям конкурентоспособного образования. Ограниченные финансовые возможности развития образования в настоящее время требуют научно обоснованного эффективного управления образованием, что даже закреплено в законодательных нормах Республики Армения. Однако параллельно в республике до сих пор отсутствуют необходимые механизмы прозрачности и публичности деятельности высших учебных заведений, система управления, ориентированная на результаты, и показатели эффективности (KPI), которые должны служить основой для определения размеров финансирования образования со стороны государства.

Кроме того, финансирование высшего профессионального образования требует разнообразных источников привлечения финансовых ресурсов, не ограничиваясь только государственной поддерж-

кой. Поэтому возникает необходимость разработки диверсифицированного механизма финансирования предоставляемых образовательных услуг, который обеспечит финансовую устойчивость деятельности вуза в долгосрочной перспективе за счет коммерциализации научных разработок, неприкосновенных финансовых фондов вуза, грантов, интернационализации образования.

В статье представлены предложения по разработке эффективного механизма финансирования университетского образования в Республике Армения с учетом передового международного опыта и специфики финансирования отечественных услуг высшего образования.

Armen Tshughuryan, Nonna Khachatryan, The issues of financing university education in the Republic of Armenia - The effective financial system plays a decisive role in the management system of university education, which is a challenge for HEIs operating in the Republic of Armenia. The current financial model of financing university educational services has lost its relevance and is not consistent with the requirements of competitive education. Limited financial resources for the development of education currently require evidence-based effective education management, which is even enshrined in the legislative norms of the Republic of Armenia. However, in parallel, the republic still does not have the necessary mechanisms for transparency and publicity of the activities of higher educational institutions, a results-based management system and performance indicators (KPI), which should serve as the basis for determining the dimensions of education financing by the state.

In addition, financing higher professional education requires a variety of sources of attracting financial resources, not limited only to state support. Therefore, there is a need to develop a diversified financing mechanism for the educational services provided, which will ensure the financial stability of university activities in the long term at the expense of

the commercialization of scientific research developments, university inviolable financial funds, grants, and the internationalization of education.

The article presents proposals for the development of an effective mechanism for financing university education in the Republic of Armenia, taking into account international best practices and the specifics of financing domestic higher education services.

Ուղարկվել է խմբագրություն 06.05.2025թ.
Գրախոսվել է 22.05.2025թ.
Ստորագրվել է տպագրության 11.06.2025թ.